621 | Առ դանձապետ տիրացու Յարութիւնն Մարտանեան ի Շամախի, որով յայտնէ թէ՝ յանձնեալն քո նուիրակ Յակոբ վարդապետին դանձանակադրաման հասեալ են ի Ս. Էջմիածին, և օրհնէ զորդի նորա զՍարգիան։

Ի Տօմարին ընդ համարաւ 754.

— | Կոնդակ Ղուկաս կաթուղիկոսի առ Շամախու, Նուխոյ, Դարբանդայ և Բագուայ ժողովուրդս վասն ընդունելոյ զիսրայէլ կաթուղիկոսն ի տեղի հանգուցեալ Յովհաննէս կաթուղիկոսի։ | 1787 ՌՄԼՉ.

— | Թուղթ ի Բագու առ դանձապետ Եղիազարն վասն առաքեալ ընծայիցն։ | 1791 ՌՄՊ

— | Թուղթ՝ ի Շամախի առ դանձապետ տիրացու պարոն Ղազարն՝ ընդ որում առաքէ զմիւռոն։

Ի Տօմարին ընդ համարաւ 759.

— | Կոնդակ նոյն կաթուղիկոսի, յամին 1234 մարտ, առ Շամախու ժողովուրդն վասն առաջնորդ նորընծայ Ոսկան եպիսկոպոսի, և վասն Սպիանի վանից, որոյ ազգատութեան և խղճութեան վասն և վասն յափըշտակութեամբ այլազգեայ անչքանալոյն՝ յանձնէ Ոսկան եպիսկոպոսին հոգալ զչինութիւնն և զպայծառութիւնն այնը վանից։ | 1785 ՌՄԼԴ

Ի Տօմարին ընդ համարաւ 760.

— | Կոնդակ Դանիէլ կաթուղիկոսի օրհնութեան ի Շամախի առ ժողովուրդն ընդ ձեռն մահտեսի Վարդան քահանայի վասն հայրապետութեան իւրոյ։ | 1803 ՌՍՕԲ